ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2021 թվականի N 342

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 3-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 10 ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անգին Վարազդատի Մուրադյանի կողմից ներկայացված 21.12.2021թ. թիվ Մ-603 դիմումը, ժառանգության իրավունքի վկայագիրը, 25.10.2005 թ. թիվ 1205833 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան քաղաքի 3-րդ միկրոշրջան 10 հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Արցախ թաղամաս, 10 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2021 թվականի N **343**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՄԱՅՐ. ՁԱԽ ԿՈՂՄ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Աշոտի Քալանթարյանի կողմից ներկայացված 21.12.2021թ. թիվ Ք-604 դիմումը, 22.11.2004թ. թիվ 1243700 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան քաղաքի Վիրահայոց մայր. ձախ կողմ արտադրամաս հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Վիրահայոց մայրուղի, 1-ին փակուղի, 6 արտադրամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2021 թվականի N 344

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱՆԱԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Անդրանիկի փողոց թիվ 53 տան բնակիչ Մարինե Սուրենի Վահրամյանի 25.01.2021թ. թիվ Վ-34 դիմումը, Ստեփանավան համայնքի գլխավոր հատակագիծը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղադրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0215-0030 ծածկագրում գտնվող Մարինե Սուրենի Վահրամյանի կողմից 2020 թվականին ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող՝ 32.90 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 32.90 քմ մակերեսով հողամաս համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
2. Ավտոտնակի համար անհրաժեշտ 32.90 քմ բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը սահմանել համաձայն հատակագծի՝ բնակելի կառուցապատման:
3. 5-օրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված ավտոտնակի և զբաղեցված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Ինքնակամ կառուցված ավտոտնակը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության

գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան ք.Ստեփանավան Մ. Խորենացու փողոց, 4/3 ավտոտնակ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2021 թվականի N 345

ՆՈՒՆԵ ՌՈՄԵՈԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 77 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի բնակիչ Նունե Ռոմեոի Պողոսյանի կողմից ներկայացված 27.01.2021թ. թիվ Պ-59 դիմումը՝ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Մ.Բաղրամյան 77 առևտրի սրահ հասցեում նրա կողմից առևտրի սրահին կից կառուցված ինքնակամ կառույցը օրինականացնելու խնդրանքը, 18.10.2004թ. N 1243643 անշարժ գույքի սեփականության/օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Օրինականացնել Նունե Ռոմեոի Պողոսյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 06-007-0007-0067 ծածկագրի 0.0126 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 33.00 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 33.00 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահի համար 56760 /հիսունվեց հազար յոթ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255001712 հաշվեհամարին:
3. Վերը նշված անշարժ գույքի՝ ք. Ստեփանավան, Մ. Բաղրամյան 77 փոստային հասցեն փոխարինել և հաստատել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց, 77/1 առևտրի սրահ:
4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2021 թվականի N 346

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ 06-007-0133-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՆԱԽԿԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ 4-ՐԴ ՄԻԿՐ. 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սայաղ Նավասարդի Մկրտչյանի կողմից ներկայացված դիմումը, ժողովրդական դեպուտատների Ստեփանավանի քաղխորհրդի գործկոմի նիստի քաղվածքը՝ 10.04.1990թ. արձանագրություն թիվ 6, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի 06-007-0133-0008 ծածկագրում գտնվող 747.3 քմ բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան համայնքի 06-007-0133-0008 ծածկագրի հողամասի մակերեսը 747.3 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 600.0 քմ մակերեսով օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Սայաղ Նավասարդի Մկրտչյանին, իսկ

մինչև 15.05.2001թ. գրանցված և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 147.3 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Սայադ Նավասարդի Մկրտչյանին:

3. Ստեփանավան քաղաքի 06-007-0133-0008 ծածկագրի հողամասի վրա առկա է 188.6 քմ արտաքին մակերեսով կիսակառույց շինություն:
4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Բագրատունյաց փողոց 27 հողամաս:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2021 թվականի N 347

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0262-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 /ՆԱԽԿԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11/ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՄԱՌԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Միքայելյան փողոց թիվ 11 հասցեի սեփականատեր Զոյա Միսակի Աղաջանյանի /ծնված 16.09.1944թ. / լիազորված անձ՝ Գեղամ Ֆրունզիկի Սարգսյանի կողմից ներկայացված դիմումը, 08.11.1993թ. կազմված սեփականության վկայագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0262-0009 ծածկագրում գտնվող 572.3 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0262-0009 ծածկագրի հողամասի մակերեսը 572.3 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 572.3 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Զոյա Միսակի Աղաջանյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 122.3 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Զոյա Միսակի Աղաջանյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և մառանի նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան քաղաքի 06-007-0262-0009 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 39.1 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 18.5 քմ մակերեսով բաց պատշգամբների, 11.9 քմ ներքին մակերեսով մառանի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Զոյա Միսակի Աղաջանյանի սեփականության իրավունքը:
4. Ստեփանավան քաղաքի նախկին Կալինինի փողոց թիվ 11 և Միքայելյան փողոց թիվ 11 հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Ա. Միքայելյան փողոց 15/1 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2021 թվականի N 348

ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. 06-007-0215-0034 ԵՎ 06-007-0215-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Անդրանիկի 56 տան բնակիչ Մարինե Սուրենի Վահրամյանի կողմից ներկայացված 25.01.2021թ. թիվ Վ-34 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Խորենացի փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, հողամասի վրա նրա կողմից ինքնակամ կառույցված ավտոտնակը օրինականացնելու խնդրանքը, 13.04.2011թ. N2505549 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարությանն 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Խորենացի փողոց թիվ 4 հասցեի, 06-007-0215-0034 և 06-007-0215-0030 կադաստրային ծածկագրերի հողամասի մակերեսը համաձայն՝ 13.04.2011թ. թիվ 2505549 սեփականության վկայականի հողամասի հատակագիծը բաժնում գծագրված հողամասի սահմանային չափերի, ըստ որի հողամասի մակերեսը կազմում է 0.024461 հա:
2. Հաստատել վերը նշված ծածկագրերի հողամասի սահմանային չափերը և 0.024461 հա հողամասի մակերեսի չափը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի և ճշտված սահմանային չափերով 0.024461 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Մարինե Սուրենի Վահրամյանի սեփականության իրավունքը:

3. Օրինականացնել Մարինե Սուրենի Վահրամյանի սեփականության իրավունքով պատկանող 06-007-0215-0034 և 06-007-0215-0030 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող Խորենացի փողոց թիվ 4 հասցեի 0.024461 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 41.71 քմ ներքին մակերեսով ավտոտնակը:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 41.91 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի համար 22130 /քսաներկու հազար հարյուրերեսուն/ ՀՀ դրամ, որը պետք վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255101371 հաշվե համարին:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2021 թվականի N 349

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱՆԱԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Անտառային 9/2 հողամաս հասցեի սեփականատեր Արսեն Լադիկի Մաչկալյանի 20.12.2021թ. թիվ Մ-602 դիմումը, Ստեփանավան համայնքի գլխավոր հատակագիծը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղադրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0059-0001 ծածկագրում գտնվող Արսեն Լադիկի Մաչկալյանի կողմից 2021 թվականին ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող՝4.96 քմ մակերեսով պարիսպները, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 60.14 քմ մակերեսով հողամաս համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
2. Պարիսպների համար անհրաժեշտ 60.14 քմ բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը սահմանել համաձայն հատակագծի՝ բնակելի կառուցապատման:

3. 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված պարիսպների զբաղեցված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Ինքնակամ կառուցված պարիսպները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք.Ստեփանավան Անտառային փողոց թիվ 9/3 պարիսպ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2021 թվականի N 350

ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. 06-007-0059-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 9/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ՀՅՈՒՐԱՏԱՆ ԵՎ ՊԱՐԻՄՊՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Անտառային 9/2 հողամաս հասցեի անշարժ գույքի սեփականատեր Արսեն Լադիկի Մաչկալյանի կողմից ներկայացված 20.12.2021թ. թիվ Մ-602 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Անտառային փողոց 9/2 հողամաս հասցեում գտնվող հողամասի վրա նրա կողմից ինքնակամ կառույցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 22.06.2020թ. N 25062020-06-0018 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Արսեն Լադիկի Մաչկալյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0059-0033 ծածկագրերի տակ գտնվող Անտառային փողոց 9/2 հասցեի 0.02763 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 66.48 քմ ներքին մակերեսով հյուրատունը, 8.5 քմ պարիսպները:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 77.97 քմ արտաքին մակերեսով հյուրատան համար 222442 /երկու հարյուր քսաներկու հազար չորս հարյուր քառասուներկու/

ՀՀ դրամ, 8.5 քմ պարիսպների համար 28441/քսանութ հազար չորս հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ: Ընդհանուր ինքնակամ կառուցված շինությունների համար 250883 /երկու հարյուր հիսուն հազար ութ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ, որը պետք վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255001712 հաշվե համարին:

3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2021 թվականի N 351

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0007-0054 ԾԱԾԿԱԳՐԻ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 77 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ , ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՄԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սաթիկ Հարությունի Խառատյանի կողմից ներկայացված 29.01.2021թ. թիվ Խ-54 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Մ. Բաղրամյան 77 բնակելի տուն հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսը ուղղելու, հողամասի վրա ինքնակամ կառույցները օրինականացնելու և գոմ գործառնական նշանակությունը փոխելու խնդրանքը, 31.01.2005թ. թիվ 1029237 անշարժ գույքի սեփականության/օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 հունիսի 2017թ. թիվ 757-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, 43-րդ հոդվածով, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարությանն 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց 77 բնակելի տուն հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, որի մակերեսը կազմում է 0.058924 հա, նախկինում թիվ1029237 անշարժ գույքի սեփականության /օգտագորշման/ իրավունքի պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած 0.0576 հա մակերեսի փոխարեն:
2. Ստեփանավան քաղաքի Բաղրամյան փողոց 77 բնակելի տուն հասցեի 0.058924 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 129.87 քմ մակերեսով գոմի գործառնական նշանակությանը փոխել բնակելի տուն գործառնական նշանակության:

3. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց 77 բնակելի տուն հասցեի, Սաթիկ Հարությունի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0007-0054 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 0.058924 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 129.87 քմ մակերեսով բնակելի տունը և 3.98 քմ մակերեսով պարիսպը:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 129.87 քմ մակերեսով բնակելի տան համար 111689 /մեկ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ, 3.98 քմ մակերեսով պարիսպի համար 3423 /երեք հազար չորս հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 115112 /մեկ հարյուր տասնհինգ հազար հարյուր տասներկու/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2021 թվականի N 352

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ԹԵԼՄԱՆԻ ՓՈՂՈՑ 2 ՓԱԿՈՒՂԻ 1 ՊԱՀԱԿԱԿԵՏ ՀԱՍՑԵՈՎ, 06-007-0202-0071 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստեփանավանի հացի գործարան» ԲԲԸ տնօրեն Սերյոժա Յուրիկի Առաքելյանի կողմից ներկայացված 23.12.2021թ. թիվ Ա-607 դիմումը, 21.06.2016թ. N 21062016-06-0021 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Թելմանի փողոց 2 փակուղի 1 պահակակետ հասցեով 06-007-0202-0071 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի նոր փոստային հասցեները և հողամասերի մակերեսները, համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծերի.

   ա) 0.281584 հա հողամասի և հողամասում առկա շինությունների փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Է. Թելմանի փողոց 2-րդ փակուղի 1 պահակատուն

   բ) 0.029967 հա հողամասի և հողամասում առկա շինության փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք., Է. Թելմանի փողոց 2-րդ փակուղի 1/1 պարիսպ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2021 թվականի N 353

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Պրոմեթևս փողոց թիվ 24 վ/տ հասցեում բնակվող Սիրանուշ Դաղիվանյանի 24.12.2021թ թիվ Դ-608 դիմումը Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 24.12.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչ՝ Սիրանուշ Դաղիվանյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» դեկտեմբերի 2021 թվականի N **354**

ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. 06-007-0015-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Բաղրամյան փողոց թիվ 15/1 հողամաս հասցեի անշարժ գույքի սեփականատեր Արմեն Արամի Բաբաջանյանի կողմից ներկայացված 27.12.2021թ. թիվ Բ-46 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Բաղրամյան փողոց թիվ 15/1 հողամաս հասցեում գտնվող հողամասի վրա նրա կողմից ինքնակամ կառույցված խանութը օրինականացնելու խնդրանքը, 06.09.2012թ. N 06092012-06-0209 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գ. ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Օրինականացնել Արմեն Արամի Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0015-0017 ծածկագրերի տակ գտնվող Բաղրամյան փողոց թիվ 15/1 հողամաս հասցեի 0.003018 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 22.32 քմ. ներքին մակերեսով խանութը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 29.36 քմ արտաքին մակերեսով խանութի համար 50500 /հիսուն հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255001712 հաշվեհամարին:
3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» դեկտեմբերի 2021 թվականի N 355

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 02.12.2021 թվականի N 02-Ն որոշման 5-րդ կետի բ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. «Փողոցների լուսավորում» (բաժին 06 խումբ 4 դաս 1) ծրագրի նախահաշվի «5112 – Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 718989 (յոթ հարյուր տասնութ հազար ինը հարյուր ութսունինը) ՀՀ դրամ գումար:
2. «Գյուղատնտեսություն» (բաժին 04 խումբ 2 դաս 1) ծրագրի նախահաշվի «5112 – Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 33297 (երեսուներեք հազար երկու հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամով:
3. «Բնակարանային շինարարություն» (բաժին 06 խումբ 1 դաս 1) ծրագրի նախահաշվի «5134 – Նախագծահետազոտական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 664500 (վեց հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով:
4. «Ջրամատակարարում» (բաժին 06 խումբ 3 դաս 1) ծրագրի նախահաշվի «5112 – Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 21192 (քսանմեկ հազար հարյուր իննսուներկու) ՀՀ դրամով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» դեկտեմբերի 2021 թվականի N 356

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-007-0205-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՔԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՉԳԵՆ ՌՈՒԲԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 28.09.2020Թ. ԹԻՎ 332 ԵՎ 16.10.2020Թ. ԹԻՎ 349 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վազգեն Ռուբիկի Գրիգորյանի կողմից ներկայացված դիմումը, 14.02.1990թ. կազմված բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 18.08.2020թ. թիվ 2512 գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, §ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ¦ ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 14.02.1990թ. կազմված տեխնիկական անձնագրի և 22.11.2005թ. թիվ 3547 սեղանամատյանով հաստատված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի Շահումյան փողոց ներկայիս Միլիոնի փողոց թիվ 10 հասցեի բնակելի տան և 0.018 հա մակերեսով հողամասի նկատմամբ, որը հանդիսացել է Շահումյան փողոց թիվ 12 հասցեի 0.054 հա մակերեսով հողամասի՝ Ռուբիկ Գրիգորյանի և Մկրտիչ Գրիգորյանի ընդհանուր օգտագործման հողամասի մաս, իրականացվել է պետական գրանցում Գերասիմ Գրիգորյանի անվամբ և համաձայն 24.11.2005թ. առուվաճառքի պայմանագրով օտարվել է Քնարիկ Գրիգորյանին /սեփականության վկայական թիվ 2134411 տրված 28.11.2005թ./, ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, §Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին¦ ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, §Տեղական ինքնակառավարման մասին¦ ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0205-0003 ծածկագրում գտնվող 0.03669 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0205-0003 ծածկագրի հողամասի մակերեսը՝ 0.03669 հա

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.03669 քմ մակերեսով հողամասից՝ 0.027 հա մակերեսով օրինական հողամասը, որը հանդիսանում է նշված հասցեի 0.054 հա հողամասից Վազգեն Ռուբիկի Գրիգորյանին պատկանող մաս, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վազգեն Ռուբիկի Գրիգորյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 0.00969 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Վազգեն Ռուբիկի Գրիգորյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. Ստեփանավան քաղաքի 06-007-0205-0003 կադաստրային ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 93.3 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 117.8 քմ ներքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի, 19.3 քմ մակերեսով բաց պատշգամբների, 63.5 քմ մակերեսով ծածկի և 3.6 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Վազգեն Ռուբիկի Գրիգորյանի սեփականության իրավունքը:
4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Սոս Սարգսյան փողոց թիվ 12 բնակելի տուն:
5. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 28.09.2020թ. թիվ 332 և 16.10.2020թ. թիվ 349 որոշումները:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» դեկտեմբերի 2021 թվականի N 357

ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. 06-007-0022-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ Հ. ՄԵՂԱՊԱՐՏԻ 17 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Հ. Մեղապարտի 17 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի սեփականատեր Մակար Սենիկի Հարությունյանի կողմից ներկայացված 29.01.2021թ. թիվ Հ-66 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Հ. Մեղապարտի 17 բնակելի տուն հասցեում գտնվող հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, հողամասի վրա նրա կողմից ինքնակամ կառույցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 28.07.2005թ. N 1243583 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարությանն 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն *որոշում եմ.*

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Հ. Մեղապարտի 17 բնակելի տուն հասցեի, 06-007-0022-0018 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը համաձայն՝ 28.07.2005թ. թիվ 1243583 սեփականության վկայականի հողամասի հատակագիծը բաժնում գծագրված հողամասի սահմանային չափերի, ըստ որի հողամասի մակերեսը կազմում է 0.079029 հա:
2. Հաստատել վերը նշված ծածկագրի հողամասի սահմանային չափերը և 0.079029 հա հողամասի մակերեսի չափը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի և

ճշտված սահմանային չափերով 0.079029 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Մակար Սենիկի Հարությունյանի սեփականության իրավունքը:

3. Օրինականացնել Մակար Սենիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0022-0018 ծածկագրերի տակ գտնվող Հ. Մեղապարտի 17 բնակելի տուն հասցեի 0.079029 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 41.27 քմ ներքին մակերեսով ավտոտնակը 7.23 քմ պարիսպները:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 48.91 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի համար 42063 /քառասուներկու հազար վաթսուներեք/ ՀՀ դրամ, 7.23 քմ պարիսպի համար 6218/վեց հազար երկու հարյուր տասութ/ ՀՀ դրամ: Ընդհանուր ինքնակամ կառուցված շինությունների համար 48281 / քառասունութ հազար երկու հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255001712 հաշվե համարին:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Հ. Մեղապարտի 19 բնակելի տուն:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» դեկտեմբերի 2021 թվականի N 358

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ավագանու 2021 թվականի 29 դեկտեմբերի թիվ 09-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամյակային համամասնությունները՝ համաձայն 1, 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» դեկտեմբերի 2021 թվականի N 359

ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. 06-007-0057-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 5/1 ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՕԲՅԵԿՏ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Անտառային 5/1 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Արսեն Ռոմիկի Սահակյանի կողմից ներկայացված 29.01.2021թ. թիվ Ս-57 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Անտառային փողոց 5/1 հասցեում գտնվող հողամասի վրա նրա կողմից ինքնակամ կառուցված առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի օրինականացնելու խնդրանքը, 28.12.2020թ. N28102020-06-0023 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Օրինականացնել Արսեն Ռոմիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0057-0011 ծածկագրերի տակ գտնվող Անտառային փողոց 5/1 առևտրի և սպասարկման ոլորտի հասցեի 0.0096 հա հողամասում ինքնակամ վերակառուցված՝ 172.78 քմ ներքին մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը:

2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 191.94 քմ արտաքին մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի համար 330137 /երեք հարյուր երեսուն հազար հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամ , որը պետք վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255001712 հաշվեհամարին:
3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» դեկտեմբերի 2021 թվականի N 360

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱՆԱԿԱՑՆԵԼՈՒ և ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Անտառային 5/1 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Արսեն Ռոմիկի Սահակյանի 29.01.2021թ. թիվ Ս-57 դիմումը, Ստեփանավան համայնքի գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղադրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0057-0015 ծածկագրում գտնվող Արսեն Ռոմիկի Սահակյանի կողմից 2020 թվականին ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող՝ 29.34 քմ արտաքին մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 31.43 քմ մակերեսով հողամաս համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
2. Առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի համար անհրաժեշտ 31.43 քմ բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը սահմանել համաձայն հատակագծի՝ հասարակական կառուցապատման:
3. 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի զբաղեցված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Ինքնակամ կառուցված առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չէն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Անտառային փողոց, 5/2 առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ